51. Եվ մինչ նրանց օրհնում էր, բաժանվեց նրանցից ու երկինք բարձրացավ:
52. Եվ նրանք երկրպագեցին Նրան ու մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ:
53. Եվ շարունակ տաճարի մեջ էին՝ փառաբանելով ու օրհնելով Աստծուն: Ամեն:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ԳԼՈՒԽ 1

Եվ Բանն Մարմին Եղավ

1. Սկզբում էր Բանը. և Բանն Աստծո մոտ էր և Բանն Աստված էր:
2. Նա սկզբում Աստծո մոտ էր:
3. Ամեն ինչ Նրանով եղավ և առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղավ:
4. Նրանում էր կյանքը և կյանքը մարդկանց լույսն էր:
5. Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է. և խավարը չճանաչեց այն:
6. Մի մարդ կար Աստծուց ուղարկված, որի անունը Հովհաննես էր:
7. Սա վկայության համար եկավ, որպեսզի Լույսի մասին վկայություն տա, որ բոլորը Նրանով հավատան:
8. Ինքը չէր այդ Լույսը, այլ *ուղարկված* էր, որպեսզի այդ Լույսի մասին վկայի:
9. Այն է ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ աշխարհ է գալիս:
10. Նա աշխարհի մեջ էր և աշխարհը Նրանով եղավ և աշխարհը Նրան չճանաչեց:
11. Յուրայիններին եկավ, և յուրայինները Նրան չընդունեցին:
12. Բայց որոնք ընդունեցին Իրեն, նրանց Նա Աստծո որդիներ դառնալու զորություն տվեց, նրանց, որ կհավատան Իր անվանը:
13. Որոնք ո՛չ արյունից, ո՛չ մարմնի կամքից, և ո՛չ էլ մարդու կամքից ծնվեցին, այլ՝ Աստծուց:
14. Եվ Բանը մարմին եղավ և մեր մեջ բնակվեց, և մենք Նրա փառքը տեսանք, որպես Հոր Միածնի փառքը՝ շնորհով ու ճշմարտությամբ լեցուն:
15. Հովհաննեսը Նրա մասին վկայեց և աղաղակեց՝ ասելով. «Սա է, որի մասին ես ասացի՝ «Նա, որ ինձանից հետո է գալիս, գերադաս է ինձանից, որովհետև Նա ինձանից առաջ էր:
16. Եվ Նրա լիությունից մենք բոլորս ստացանք շնորհ՝ շնորհի փոխարեն:
17. Որովհետև Օրենքը Մովսեսի ձեռքով տրվեց, բայց շնորհը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսով եկան:
18. Աստծուն երբե՛ք ոչ ոք չի տեսել, մի՛միայն միածին Որդին, որ Հոր ծոցում է, Նա լրիվ հայտնեց *Նրան*:

Հովհաննես Մկրտչի Վկայությունը
(Մատթ. 3. 1-12, Մարկ. 1. 1-8, Ղուկ. 3. 1-18)

19. Եվ այս է Հովհաննեսի վկայությունը, երբ հրեաները Երուսաղեմից քահանաներ ու ղևտացիներ ուղարկեցին նրա մոտ, որ հարցնեն նրան, թե՝ «Դու ո՞վ ես».
20. նա չուրացավ, այլ խոստովանեց, թե՝ «Ես Քրիստոսը չեմ»:
21. Եվ նրանք հարցրին նրան. «Հապա ո՞վ, դու Եղիա՞ն ես»: Եվ նա ասաց՝ «Չեմ»: «Դու այն մարգարե՞ն ես»: Եվ նա պատասխանեց՝ «Ո՛չ»:
22. Այն ժամանակ ասացին նրան. «Հապա ո՞վ ես դու, ասա, որպեսզի մենք էլ պատասխան տանք նրանց, որ մեզ ուղարկեցին: Ի՞նչ ես ասում քո մասին»:
23. Նա ասաց. «Ես նրա ձայնն եմ, որ անապատում կանչում է՝ «Ուղղեցե՛ք Տիրոջ

This sample page is for style and size guidance only and cannot accurately represent the quality of the actual printed text. Your printout of this page may show text lighter or heavier than in our actual Bibles depending on the printer used.

If printed actual size this bar should measure 10cm/100mm

If printed actual size this bar should measure 4"

The above image and setting is the property of the Trinitarian Bible Society.
This sample is reproduced for your personal use only—not for distribution.